

**ԽՆՈՒՄԻ (ՀԵՇՏԻՅԱ, ՈՒՋՄԱՆԱ, ԹՈՐԻԱ) ԽՈՍՎԱԾՔԻ ՆԵՂ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Արոսյան Մարիա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՌԴ, արտասահմանյան գրականության

համառոտաստանյան պետական գրադարան

Maria.arosyan@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-08-0-10

Բանալի բառեր. Մուշ, Խնուս, Քյուլլի, Հեշտիա, խոսվածք, ներբարբառային, բարբառ, դարձվածք, ակունք, պատմական հիմք, ազդեցություն:

Ժամանակակից հայերենի բարբառների խորն ու բազմակողմանի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հայագիտության համար: Դա կարևոր է հատկապես լեզվի պատմական քննության ժամանակ, երբ անհրաժեշտություն է լինում հայերենի համակարգում ճշտել բարբառների տեղն ու դերը, օտար լեզուների և ժամանակակից հայերենի ազդեցությունը բարբառների վրա:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է Վրաստանի Սամցխե-Ջավախեթի մարզի Նինոծմինդայի մունիցիպալիտետում Հեշտիայում (վրաց.՝ გეშთია), Ուջմանայում (վրաց.՝ უჯმანა) և Թորիայում (վրաց.՝ თორია) հետզհետե ներդրվող վրացերեն ուսուցմամբ, որն հավանաբար կունենա բավականին վտանգավոր ազդեցություն տեղի խոսվածքի վրա: Գյուղերը հիմնադրվել են 1830 թվականներին՝ Արևմտյան Հայաստանից՝ հիմնականում Խնուսից եկած գաղթականների կողմից: Հեշտիան Ջավախքի ամենամեծ հայաբնակ գյուղերից մեկն է համարվում: Գյուղում գործում է Սբ. Աստվածամոր կաթոլիկ

եկեղեցին: Հեշտիայի խոսվածքում իրենց արտահայտությունն ունեն Մշո բարբառի ձայնավորական համակարգին բնորոշ բոլոր հատկանիշները: Մշո բարբառում գործածվում են 36 բաղաձայններ (բ,պ,փ,գ,կ,ք,դ,տ,թ,ձ,ծ,ց,ջ,ճ,չ,բ',գ', դ',ձ',ջ',վ,ֆ,գ,ս,ժ,շ,ղ,խ,հ',հ,մ,ն,լ,ր,ռ,յ): Բարբառը բնութագրվում է բաղաձայնական քառաստիճան համակարգով և շնչեղ ձայնեղների, ինչպես նաև ձայնեղ հ'-ի առկայությամբ: Շնչեղ ձայնեղները գործառում են բառակզբում՝ գրաբարյան ձայնեղների դիմաց: Բառակզբում է գործառում նաև ձայնեղ հ'-ն՝ իբրև ձայնավորով սկսվող բառերում դրսևորվող բառերի հավելում (հ'երգեն, հ'ուսում, հ'իստակ, հ'իրգուն):

Այս հոդվածում խոսվում է Մշո բարբառի Խնուսի խոսվածքում հանդիպած դարձվածքների մասին, որոնց մի մասի համարժեքները հանդիպում ենք նաև գրական հայերենում կամ այլ բարբառներում, իսկ մի քանիսը հատուկ են միայն տվյալ խոսվածքով խոսողներին ու ունենեն իրենց ակունքները: Նախ նշենք, որ դարձվածքները երկու կամ ավելի բառից կազմված այն քարացած արտահայտություններն են, որոնք ունեն փոխաբերական նշանակություն և կիրառվում են խոսքն ավելի դիպուկ, տպավորիչ և գունեղ դարձնելու նպատակով: Թեպետ դարձվածքների բաղադրիչները գրվում են անջատ, սակայն նրանք ունեն մեկ բառի արժեք և ներառվում են բառարաններում: Դարձվածքներ կան բոլոր լեզուներում. դրանց մի մասը ժողովրդական են, այսինքն՝ ձևավորվել են ժողովրդի կենցաղում՝ տարբեր առարկաների և երևույթների համեմատությունների

1 National Statistics Office of Georgia (geostat.ge)

2 **Կատվայան Վ.**, *ՀՀ բարբառային համապատկեր*, Գիրք 1-ին, Գեղարքունիքի մարզ, Ե., 2018, էջ 22-23:

միջոցով, մյուս մասն էլ իրենց ստեղծման պատմությունն ունեն՝ ավանդություններ, գրական սյուժեներ, պատմական դեպքեր և այլն:

Դարձվածքները՝ որպես լեզվի ինքնուրույն իմաստային միավորների ուսումնասիրությունը հայ լեզվաբանության մեջ ուշադրության է արժանացրել Մ. Աբեղյանը 1930-ական թվականներից սկսած: Մասնագետների մի մասը դարձվածաբանության մեջ ընգրկում են բոլոր կայուն կապակցությունները, ուրիշները սահմանափակվում են բառակապակցությունների որոշակի խմբով: Դարձվածաբանության ավելի լայն ըմբռնման կողմնակիցները դարձվածքների մեջ ներգրավում են առածները, ասացվածքները, աֆորիզմները, թևավոր խոսքերը, ռմանք անգամ՝ բոլոր հարադրությունները, բարդ հարադրական շաղկապները, բառակազմական տերմինները, և այլն, մյուսները՝ դարձվածաբանության ավելի նեղ ըմբռնման կողմնակիցները, հրաժարվում են վերոհիշյալից և հաճախ դարձվածքներ են համարում միայն իդիոմային արտահայտությունները (իդիոմները):

Ժամանակակից հայերենում դարձվածքը հաճախ անվանվում է դարձվածաբանական միավոր, դարձվածաբանական արտահայտություն, հատուկ ոճ, որոշ դեպքերում նաև իդիոմ, իդիոմային արտահայտություն: Արևմտահայ գրական լեզվում իդիոմի փոխարեն շրջանառության մեջ է դրված հատկաբանություն բառը: Մասնագիտական գրականության մեջ բարբառային տարբերակման վերաբերյալ մոտեցումները տարբեր են: Հստակ չեն սահմանազատվում բարբառային, գավառական, ժողովրդախոսակցական բառաշերտերը: Հիմք ընդունելով Պ. Բեղիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ում դարձվածքային միավորների կոդքին արված նշումները՝ Ա.Մկրտումյանը իր աշխատության մեջ առաջարկում է բարբառային դարձվածքային միավորները բաժանել երկու խմբի. ա/

ընդհանուր բարբառային, որի մեջ մտնում են բարբառային ծագում ունեցած արդեն գրականացված և գրական լեզվի շեմին կանգնած դարձվածքային միավորները, բ/ նեղ բարբառային, որի մեջ մտնում են որևէ տարածքի բնորոշ, մյուս բարբառների համար անհասկանալի և գրական լեզվի բառապաշարում ընդգրկվելու հեռանկար չունեցող թվով սահմանափակ դարձվածքային միավորներ:

Հոդվածում խոսվում է նեղ բարբառային դարձվածքային միավորի մասին: Խնուսի խոսվածքում, ինչպես նաև ժողովրդախոսակցային դարձվածքներում մեծ տեղ են գրավում կենդանիների ու թռչունների, սողունների անուններով կազմված դարձվածքները: Նման դեպքերում ժողովուրդը կենդանիներին բնորոշ հատկանիշներով վերափմաստավորված կերպով բնութագրում է մարդկանց, նրանց արարքներեն ու բնավորությունը: Օրինակ ագահ, անկուշտ, շատակեր մարդը համեմատվում է գայլի հետ **«գիլու պես ուտող, գել փըռտող, գել ուտող»**, մաշված, քրքրված իր նկարագրելու համար օգտագործվում է **«գիլու բերան՝ ընգուգ»** արտահայտությունը: Շատ նիհար մարդուն բնորոշելիս, օրինակ, ժամանակակից գրական հայերենն ունի միայն կաշին ու ոսկորը մնալ, **խսկ Խնուսի խոսվածքում այսվում է «փիցծուգ էծ, փիցծուգ դոյդոյ, մըզլեգու քիսպատ (փոքրամարմին, շատ նիհար ու ճարպիկ մարդ), խըլըսուգ իսան», շատախոսել՝ «բըլբուլ կտրել», «շան հաչոց կտրել», գործից կտրող, իր հետևից տանող մարդուն՝ «օըրձ խազ», դժվարությամբ քայլող մարդուն՝ «դաբաղ՝ օդնյեր», հիմար, դատարկագլուխ մարդու նկարագրելու համար՝ «երդիկն ավլուգ-հորդուկ ը», վախենալ՝**

3 Մկրտումյան Ա., *«Դարձվածքային հոմանիշները ժամանակակից հայերենում»*, Ե., 2015թ., էջ 10:

«լեղին պաղռել», անձամբ զգույշացնել՝ «**բերներեքան ըսել**», հանկարծակի մեծ շահույթ ունենալ՝ «**քարվան կտրել**», շատ մուր զիշեր՝ «**քարվան կտրելու զիշեր**» և այլն:

Ինչպես նկատեցինք խոսվածքի դարձվածքային միավորների վրա էական ազդեցություն են ունեցել հատկապես թուրքերենը և արաբերենը, որոնք հիմնականում կապված են եղել թուրք և արաբ առևտրականների հետ ունեցած սերտ հարաբերություններով, դա են վկայում վերը նշված դարձվածքները, ինչպես նաև դրանց ակունքները:

Կան նաև դարձվածքային միավորներ, որոնք բնորոշ են միայն Խնուսի խոսվածքին և ունեն իրենց պատմական հիմքը. օրինակ «**Կարկըտի տարի**», «**Գելոյի գոմեշ**», «**Լոշ Արոյի փոխն**», որոնք մինչև օրս էլ օգտագործվում են, սակայն ավելի երիտասարդ սերունդին արդեն հայտնի չի դարձվածքի պատմական ակունքը, դրանց պատմական հիմքի մասին որոշ չափով տեղյակ են փոքրաթիվ մեծահասակ բարբառակիրները: Այս դարձվածքների մասին խոսվում է նաև Ալոյանի «Մշո ջոջ քարի բեկորները»⁴ ազգագրական աշխատության մեջ:

Դիտարկենք այս երեք դարձվածքների ակունքներն առանձին-առանձին:

«Կարկըտի տարի»

Դեպքը պատահել է գաղթից մոտ 10 տարի առաջ, Խնուսի Քյուլլի գյուղում: Մի անգամ գյուղով անցնում է Բայազետի փաշային պատկանող մի քարավան: Այդ ժամանակ Քյուլլի գյուղապետը (քեհյան կամ ռեսը) Ռես Գոմցյանն էր՝ Հակոբ (Կակո) Գոմցյանի հայրը: Թուրք վաճառականները ու նրանց ուղեկից զինվորները գյուղապետից պահանջում են սննդամթերք՝ պահելով

⁴ Ալոյան Սալավաթ, *Մշո ջոջ քարի բեկորներ*, Արամազդ հրատ., Ե. 1996թ.:

իրենց շատ ամբարտավան: Հեռանալուց առաջ հայտարարում, որ ոչինչ չեն վճարի, որովհետև հայր, ըստ իրենց, ծնվել է թուրքերին ծառայելու և նրանց կարիքները հոգալու համար: Քարավանը շարունակում է ճանապարհը, սակայն ուղտերից մեկը անջատվում է քարավանից, կրկին մտնում գյուղ և չորքում ճիշտ նույն տեղում, որտեղից մի քանի ժամ առաջ հեռացել էր: Զարմացած և միաժամանակ ուրախացած քյուլլեցիները ցած են իջեցնում և բացում ուխտի վրա բարձած հակերը, որոնցում հայտնաբերում են բազմաթիվ թանկարժեք ապրանքներ: Գյուղապետն ու գյուղացիները որոշում են վրեժ լուծել արյունաբքու ու ամբարտավան Բայազետի փաշայից, որը ոչ շատ հեռավոր անցյալում հրի ու սրի էր մատնել իրենց գյուղը: Մինչ այդ գյուղով գրեթե ամեն օր բազմաթիվ քարավաններ էին անցել, սակայն նրանցից ոչինչ չէին թաքցրել: Ընդհակառակը, եթե որևէ ապրանք էին գտել, ապա անմիջապես փնտրել էին տերերին և ետ վերադարձրել **«սամանաթ»-ը**, սակայն այս անգամ նրանք որոշում են այդ ապրանքները հանձնել գյուղապետին գյուղի կարիքները հոգալու և հարկերը մուծելու համար: Հետքերը կորցնելու համար նրանք ուխտին տանում ու թաքցնում են իրենց հայտնի կիրճերից մեկում: Սակայն գյուղապետը շատ փորձված ու հեռատես մարդ էր, ընկնում է խորը մտատանջության մեջ. նրա համար պարզ էր, որ այդպիսի թանկարժեք բեռից թուրքերը հեշտությամբ չեն հրաժարվի և շուտով կհայտնվեն գյուղում: Այն որ գյուղացիներից ոչ մեկը կատարվածի մասին թուրքերին ոչինչ չէր հայտնի, կասկածից վեր էր, բայց դեպքին ականատես էր եղել նաև մի խելապակաս աղջիկ և պարզ էր, որ եթե նրան քննեին, ամեն ինչ կբացահայտվեր:

Երկար խորհելուց հետո գյուղապետը գտնում է հնարը. բանը նրանում էր, որ այդ աղջիկը մահի չափ վախում էր կարկուտից: Գյուղապետի կարգադրությամբ մի քանի հոգի դուրս են գալիս

փողոց, որտեղ այդ ժամանակ գտնվում էր այդ խելապակաս աղջիկը, և գոռում «կարկուտ է, կարկուտ է»: Մարսափահար աղջիկը նետվում է տուն ու ուզում որևէ տեղ թաքնվել: Նրան մտցնում են արդեն հանգած թոնիրը, որի վրա դնում են թիթեղ, անմիջապես թիթեղի վրա կուտ են լցնում և ներս քշում տան տիրոջ հավերին, որոնք սկսում են կտցահարել գարու հատիկները: Իսկ աղջկա մոտ այն տպավորությունն է ստեղծվում, որ դրսում ուժեղ կարկուտ է: Հաջորդ օրը գյուղում հայտնվում են թուրք վաճառականները ոստիկանների ուղեկցությամբ, խուզարկում ամբողջ գյուղը, սակայն ոչինչ չեն հայտնաբերում: Նրանք քննում են նաև այդ խելապակաս աղջկան, ով անմիջապես ասում է, որ կարկուտի տարին ինքը տեսել է մի ուխտ, որը եկել ու չոքել է գյուղապետի դռանը, հարցաքննության ամբողջ ընթացքում անընդհատ կրկնում էր նույն խոսքերը. թուրքերը հասկանում են, որ այդ աղջիկը խելապակաս է, թողնում ու հեռանում են: Այդ խոսքերը սերնդից սերունդ փոխանցվելով՝ հասել է մինչև օրս, երբ մեկը սուտ է խոսում կամ պատմում է դեպքեր, որոնց իսկությունը պարզել հնարավոր չէ, ասում են. «Է՛, ախպեր ջան, քու ըսուզն կարկըտի տարին ը եղի»:

«Գելոյի գոմեշ»

Շատ տարիներ առաջ Հեշտայում ապրել է մի մարդ՝ Գելո անունով: Նա մի գոմշացուլ է ունեցել ձիթադացը (ձիթհանքը) աշխատեցնելու նպատակով, սակայն նրա և գյուղացիների բոլոր փորձերը անցել են ապարդյուն, քանի որ գոմեշը մի քայլ անգամ տեղից չի շարժվել: Իսկ երբ Գելոն արդեն հուսահատվել էր և ուզում էր արձակել գոմեշին, արոտից տուն են վերադառնում նրա կովերն ու ունեցած միակ էգ (մատակ) գոմեշը: Մատակը մոտենում է գոմշացուլին և սկսում պտույտ գալ ձիթհանքի քարի շուրջը, վերջինս

սկսում է հետևել նրան: Այդ դեպքից հետո Գելոն միշտ գոմեշի առջևից քշում էր մատակ գոմեշին, իսկ գոմշացույրը հլու-հնազանդ հետևում էր նրան՝ պտտացնելով ձիթհանքի քարը: Մինչ օրս էլ հեշտեցիներն ու կողքի գյուղերում բնակվողները, երբ ուզում են ակնարկել կնամուլ կամ կնասեր տղամարդուն, ասում են **«Գելոյի գոմեշըն ը»:**

«Լոշ Արոյի փոխն»

Արոյանները փոքր ինչ ուշ են հաստատվում Հեշտիյա գյուղում և ժամանակին չեն կարողանում անասնակերի բավարար պաշար հավաքել: Մարտի սկզբներին Արոյի խոտը արդեն վերջանալու վրա էր և պարտքով խոտ է խնդրում Կակոյից (Հակոբ Գոմցյան), որի հետ կապված էր խնամիական և բարեկամական կապերով, սակայն Կակոն մերժում է նրան, ծիծաղելով ասում, որ Բինգյուլի սարերը բացվել են, և Արոն կարող է տանել այնտեղ արածեցնել իր անասուններին: Մինչև հոգու խորքը վիրավորված Արոն տուն է վերադառնում: Առավոտյան մոտենում է մարագի դռանը, որպեսզի հարդի մնացորդներով կերակրի անասուններին, սակայն այն չի բացվում: Մարագը դժվարությամբ բացելով՝ տեսնում է՝ այն լիքը լցված է խոտով ու հարդով. պարզվում է գիշերը Կակոյի ծառաները բացել էին նրա մարագի երդիկը և այնտեղից խոտն ու հարդը ներս լցրել: Նույն տարվա աշնանը Կակոկի ծառաները չեն կարողանում բացել իրենց մարագը: Կակոյի մարագը մինչև առաստաղը ու նույնիսկ տանիքը ծածկված էր խոտով ու հարդով. Լոշ Արոն վերադարձրել էր իր պարտքը: Մինչև օրս էլ, երբ որևէ մեկը առատաձեռնություն է ցուցաբերում, կամ երբ ճաշ են լցնում ամանի մեջ բերնեբերան, ասում են **«Լոշ Արոյի փոխն ը»**⁵:

⁵ Ալոյան Ս., նշվ. աշխ., էջ 35:

Նեղ բարբառային դարձվածքները հնարավորություն են տալիս ավելի ճիշտ պատկերացում կազմելու տվյալ խոսվածքի մասին, պարզելու օտար մշակույթի, օտար լեզվի ազդեցության խորության աստիճանը պատմական որոշակի ժամանակահատվածներում, իսկ նեղ բարբառային դարձվածքների պատմական հիմքերն ու ակունքները, թույլ են տալիս ճանաչելու այս խոսվածքը օգտագործող մարդկանց արժեհամակարգը, պատմական իրադարձություններն ու դեպքերը, որոնք հիմք են հանդիսացել այդ նեղ դարձվածքային միավորի առաջացմանը, ինչպես նաև կարող են աղբյուր հանդիսանալ գրական լեզվի սնման և հարստացման համար:

Аросян Мария - Об узких диалектных фразах в Хнусской речи.-

Узкие диалектные фразы сел Эштия, Уджмана и Тория, выходцы которых были из Западной Армении из Хнуса, входивший в состав Эрзурумского района, достойны внимания, поскольку в отличие от речи материнского диалекта в Джавахкском регионе, он используется в иной языковой среде, в окружении разных диалектных единиц, но несмотря на это, сохранил свою уникальность и может представлять интерес как проявление общих черт диалекта, так и с точки зрения особенностей самостоятельного развития, тому свидетельствуют множесво диалектных фраз, которые в основном используют носители этой речи. Фразы или идеомы этой речи интересны тем, что у них есть историческая основа, которая дает нам важную информацию не только самобытности Хнуской речи, об особенностях характера, быта, коммуникационных особенностях носителей речи, но и об исторических событиях, когда и при каких обстоятельствах начали использовать конкретные фразы.

Ключевые слова: Эштия, Хнус, Муш, диалект, речь, узкие диалектные фразы, особенность.

Arosian Maria- On narrow dialectal phrases in the speech of Khnus.-

The narrow dialect phrases of the villages of Eshtia, Ujmana and Toria, whose immigrants were from Western Armenia from Khnus, which was part of the Erzurum region, are worthy of attention, since, unlike the speech of the mother dialect in the Javakhk region, it is used in a different language environment, surrounded by different dialect units, but, despite this, it has retained its uniqueness and may be of interest both as a manifestation of the general features of the dialect, and from the point of view of the features of independent development, as evidenced by the many dialect phrases that are mainly used by the dialect's speakers.

The phrases or ideoms of this speech are interesting because they have a historical basis, which gives us important information not only about the originality of Khnus's speech, about the character, way of life and peculiarities of communication of the speakers, but also about historical events. when and under what circumstances they began to use specific phrases.

Key words: Heshtiya, Khnus, Mush, dialect, unique, speech, narrow dialect phrases.